



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցոյ Ծովի

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

13th October 2019

Bulletin 41/2019

Fifth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 2:1-10

Յետոյ, տասնչորս տարի ետք, դարձեալ բարձրացայ Երուսաղէմ՝ Բառնաբասի հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Բարձրացած էի յայտնութեամբ, եւ անոնց ներկայացուցի այն աւետարանը՝ որ հեթանոսներուն մէջ կը քարոզեմ. բայց առանձին անոնց՝ որ երեւելիներ էին, որպէսզի ընդունայն չվազեմ կամ վազած չըլլամ: Բայց ո՛չ իսկ ինծի հետ եղող Տիտոսը, որ Յոյն էր, հարկադրուեցաւ թլփատուիլ՝ գաղտնի ներս բերուած սուտ եղբայրներուն պատճառով, որոնք ներս սպրդած էին՝ լրտեսելու համար Քրիստոս Յիսուսով մեր ունեցած ազատութիւնը, որպէսզի ստրուկ ընեն մեզ. անոնց տեղի չտուիմք՝ նոյնիսկ քիչ մը ատեն՝ ենթարկուելով, որպէսզի աւետարանին ճշմարտութիւնը ձեր մէջ մնայ:

Իսկ անոնք որ կը կարծուէին բա՛ն մը ըլլալ - ինչ որ էին՝ ատիկա ինծի հարց չէ, քանի որ Աստուած մարդոց աչառութիւն չըներ -, այնպէս կարծուածները աւելի ոչինչ հաղորդեցին ինծի. հապա՛ ընդհակառակը, երբ տեսան թէ անթլփատներուն աւետարանը ինծի վստահուած է, ինչպէս Պետրոսի ալ՝ թլփատուածներունը, (որովհետեւ ա՛ն որ ներգործեց Պետրոսի մէջ՝ թլփատուածներուն առաքելութեան համար, նոյնպէս ներգործեց իմ մէջս՝ հեթանոսներուն հանդէպ,) ու երբ Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք սիւներ կարծուած էին, գիտակցեցան ինծի տրուած շնորհքին, իրենց աջ ձեռքը տուին ինծի ու Բառնաբասի՝ իբր նշան հաղորդակցութեան, որպէսզի մենք քարոզենք հեթանոսներուն, իսկ իրենք՝ թլփատուածներուն: Միայն թէ կուզէին որ աղքատները յիշենք, ինչ որ ես ալ փութացի ընել:

The Epistle of St Paul to the Galatians 2:1-10;

Paul Accepted by the Apostles

Then after fourteen years, I went up again to Jerusalem, this time with Barnabas. I took Titus along also. I went in response to a revelation and, meeting privately with those esteemed as leaders, I presented to them the gospel that I preach among the Gentiles. I wanted to be sure I was not running and had not been running my race in vain. Yet not even Titus, who was with me, was compelled to be circumcised, even though he was a Greek. This matter arose because some false believers had infiltrated our ranks to spy on the freedom we have in Christ Jesus and to make us slaves. We did not give in to them for a moment, so that the truth of the gospel might be preserved for you.

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

As for those who were held in high esteem—whatever they were makes no difference to me; God does not show favouritism—they added nothing to my message. On the contrary, they recognized that I had been entrusted with the task of preaching the gospel to the uncircumcised, ^a just as Peter had been to the circumcised. ^b For God, who was at work in Peter as an apostle to the circumcised, was also at work in me as an apostle to the Gentiles. James, Cephas ^c and John, those esteemed as pillars, gave me and Barnabas the right hand of fellowship when they recognized the grace given to me. They agreed that we should go to the Gentiles, and they to the circumcised. All they asked was that we should continue to remember the poor, the very thing I had been eager to do all along.

2: A short interpretation of the Scripture reading

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 12:35-44

Երբ Յիսուս կը սորվեցնէր տաճարին մէջ՝ ըսաւ. «Դպիրները ինչպէս կըսեն թէ «Քրիստոս Դաւիթի որդին է»:

Արդարեւ ինք՝ Դաւիթ՝ Սուրբ Հոգիով կըսէ. «Տէրը ըսաւ իմ Տէրոջս. «Բազմէ՛ իմ աջ կողմս, մինչեւ որ քու թշնամիներդ պատուանդան դնեմ ոտքերուդ»:

Ուրեմն ինք՝ Դաւիթ՝ Տէր կը կոչէ զայն. ինչպէս ան կըլլայ իր որդին»: Բազմութենէն շատեր հաճոյքով մտիկ կընէին անոր:

Իր ուսուցումին մէջ կըսէր անոնց. «Զգուշացէ՛ք դպիրներէն, որոնք կուզեն երկայն հանդերձներով շրջիլ, կը փնտոնեն բարեւները՝ հրապարակներուն վրայ, առաջին աթոռները՝ ժողովարաններու մէջ, եւ առաջին բազմոցները՝ ընթրիքներու մէջ. որոնք կը լափեն այրիներուն տունները, ու իբր պատրուակ՝ աղօթքը կերկարեն: Ասոնք աւելի՛ խստութեամբ պիտի դատուին »:

Յիսուս գանձանակին դիմաց նստած՝ կը նայէր թէ բազմութիւնը գանձանակին մէջ ինչպէս դրամ կը ձգէ: Շատ հարուստներ՝ շատ բան ձգեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ ու երկու լումայ ձգեց, որ նաքարակիտ մը կընէ: Իր աշակերտները կանչելով իրեն՝ ըսաւ անոնց. «Ճշմա՛ր տապէս կը յայտարարեմ ձեզի թէ այս աղքատ այրին՝ գանձանակը դրամ ձգողներուն բոլորէն աւելի ձգեց. որովհետեւ բոլորը իրենց առատութենէն ձգեցին, բայց ան՝ իր կարօտութենէն՝ ձգեց իր ամբողջ ունեցածը, իր ամբողջ ապրուստը»:

The Holy Gospel of Jesus Christ according to Mark 12:35-44

Whose Son Is the Messiah?

While Jesus was teaching in the temple courts, he asked, “Why do the teachers of the law say that the Messiah is the son of David? David himself, speaking by the Holy Spirit, declared:

“‘The Lord said to my Lord:

“Sit at my right hand
until I put your enemies
under your feet.”’” ^b

David himself calls him ‘Lord.’ How then can he be his son?”

The large crowd listened to him with delight.


Warning Against the Teachers of the Law

As he taught, Jesus said, “Watch out for the teachers of the law. They like to walk around in flowing robes and be greeted with respect in the marketplaces, and have the most important seats in the synagogues and the places of honour at banquets. They devour widows’ houses and for a show make lengthy prayers. These men will be punished most severely.”

The Widow’s Offering

Jesus sat down opposite the place where the offerings were put and watched the crowd putting their money into the temple treasury. Many rich people threw in large amounts. But a poor widow came and put in two very small copper coins, worth only a few cents.

Calling his disciples to him, Jesus said, “Truly I tell you, this poor widow has put more into the treasury than all the others. They all gave out of their wealth; but she, out of her poverty, put in everything—all she had to live on.”



Widow's Mite

Ս. Թարգմանիչ վարդապետների՝ Մեսրոպի, Եղիշեի, Մովսես Բերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու տոն

«Մեր լեզուն ճանապարհ է դեպի հավերժություն, գրավական՝ մեր ինքնության, Նոյան տապան՝ մեր փրկության, լուսաստղ՝ մեր լինելության»:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

Սուրբ Թարգմանիչ վարդապետների տոնը հայ ժողովրդի ամենամոլորակ և սիրված ազգային-եկեղեցական տոներից է: Թարգմանիչ վարդապետների հիշատակը Հայ եկեղեցին տոնում է տարին երկու անգամ: Առաջինը կոչվում է «Տոն սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ» և տոնվում է Հոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի օրը: Երկրորդը կոչվում է «Տոն մեր սուրբ Թարգմանիչ վարդապետների՝ Սահակի և Մեսրոպ Մաշտոցի, և նրանց սուրբ աշակերտների՝ Եղիշե Պատմիչի, Մովսես Բերթողի, Դավիթ Անհաղթ փիլիսոփայի, Գրիգոր Նարեկացու և Ներսես Կլայեցու», որը շարժական է և տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից մինչև նոյեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում: Թարգմանիչ ընդհանուր անվան տակ հայտնի են Ս. Մեսրոպ Մաշտոցին և Ս. Սահակ Պարթևին աշակերտած շուրջ հարյուր սաներ:

Սկզբնական շրջանում կային հատուկ Թարգմանիչներ, որոնք արարողությունների ժամանակ Սուրբ Գրքի հատվածները բանավոր Թարգմանում էին հայերեն: Սակայն դա բավարար չէր: Այս խնդրի շուրջ մտախոզված էր Ս. Մեսրոպ Մաշտոցը: Հայր զրկված էր Սուրբ Գիրքն ընթերցելու և ճշմարտությունն ու փրկությունը ձեռք բերելու հնարավորությունից: Նա անընդհատ մտածում էր Սուրբ Գիրքը հայերենի վերածելու գաղափարի շուրջ, որի իրականացման համար էլ դիմում է Հայոց կաթողիկոսին՝ Ս. Սահակ Պարթևին և մեծ ընդունելություն գտնում: Պարզվում է, որ կաթողիկոսը նույնպես մտախոզված է այդ հարցով: Նրանց ծրագրերին իր հավանությունն է տալիս նաև թագավորը՝ Վռամշապուհ Արշակունին: Ս. Մաշտոցը, վերցնելով իր աշակերտներին, գնում է Ասորիքի Միջագետք, լինում Եդեսիայում, ուր և տեղի է ունենում ամենամեծ հրաշքներից մեկը. «Մեսրոպն ապավինեց Աստծուն պահքով ու աղոթքներով: Եվ Աստված, որ կատարում է իրենից երկյուղ կրողների կամքը, լսում է Մեսրոպի աղոթքները և ցույց տալիս նրան գրերը սքանչելի տեսիլքով, և ոչ թե երազի մեջ քնած ժամանակ, այլ արթուն աչքով իմանալի և աչքի տեսանելիքով զգալի: Մեսրոպը տեսնում է, որ աջ ձեռքի դաստակով գրում է վեմի վրա, որը դրված էր նրա առջև: Եվ գրի փորվածքն այնպիսին էր, ինչպիսին ձեռքն էր ձև տալիս վեմի վրա. և գրերի տարբերություններն ու անունները ձևավորվում էին Մեսրոպի մտքում» (Ս. Խորենացի «Հայոց պատմություն»):

Ունենալով հայ նշանագրերը՝ Ս. Մեսրոպը Հռոմի անուսի հետ սկսում է ձևավորել դրանք: Մտանալով արդեն գրելու պատրաստ տառերը՝ Ս. Մեսրոպն առաջին անգամ Թարգմանում է Սուրբ Գրքի հետևյալ տողը. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» (Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը), որը վերցրել էր՝ Սողոմոնի «Առակաց» գրքից: Ահա սա էր, որ եղավ առաջին հայատառ նախադասությունը՝ գրված հայ ուսուցչի ձեռքով: Բացահայտ մի իմաստություն, որով բոլորի համար հասկանալի պետք է դառնար Խոսքը և Գիրքն ընթերցելու անհրաժեշտության գաղափարը: Այս աստվածատուր նվերից հետո Ս. Մեսրոպը վերադառնում է Հայաստան՝ հետը բերելով մի գանձ, որը լինելու էր հայ ժողովրդի հետագա դարերի մաքառման զենքը, ինչպես նաև նրա գոյատևման առհավատյալ: Ս. Սահակի և Ս. Մեսրոպի ջանքերով Հայաստանում սկսվում են բացվել դպրոցներ, ուր ուսուցանվում են հայ գրերը: Նրանք իրենց աշակերտների հետ ձեռնամուխ են լինում Սուրբ Գրքի Թարգմանությանը: Այսպիսով, քրիստոնեությունը հայացվում է և դառնում հայի կենսակերպը:

«Հայաստանը միայն հող ու քար չէ, վանք ու եկեղեցի չէ, խաչքար ու հուշարձան չէ, բերդու ու պարիսպ չէ, կամուրջ ու աղբյուր չէ, այլ մագաղաթ ու գիրք է»:

«Գիրքը քաղաքակրթության տարածման և զարգացման անիվն է»:

«Մենք կանք, մեր լեզվի շունչը մեր ազգի մեջ կենդանի պահող գրով և գրքով»:

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս

Feast of the Holy Translators - Sts. Mesrob, Yeghishe, Moses of Khoronk, philosopher Davit Anhaght, Gregory of Narek and Nerses the Gracious (Nerses of Kla)

For the Armenian people the Feast of the Holy Translators is one of the most favorite and beloved national-ecclesiastical feasts. Nearly two hundred disciples of St. Mesrob Mashtots and St. Sahak are known by the general group name "Holy Translators". The disciples of the above mentioned group of Holy Translators are known as "Junior Translators". Celebrating this feast, the Armenian Apostolic Church pays tribute of respect to the bright memory of St. Mesrob Mashtots, Yeghishe, Moses of Khoronk, philosopher Davit Anhaght, whose sacred work and mission later has been continued on by St. Gregory of Narek and St. Nerses the Gracious. The word "Translator" means "Interpreter". Comprehending and precisely understanding the demands of that period, the Holy Translators initiated the sacred work of creating the Armenian alphabet and literature. By the strength of their faith they dispersed the darkness and warmed the human souls. Thanks to the Holy Translators the Holy Bible was translated into Armenian and the Armenian peoples obtained the possibility to read the Holy Book in the native language. By means of their activity the Holy Translators contributed to the spiritual-cultural awakening of Armenia. After the translation of the Holy Bible, many books of Church Father were translated into Armenian, and thanks to this fact many translations, the original copies of which haven't been preserved, presently exist only in the translated variant and thus the translations have obtained the value of the original.

3: This weeks message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Խնդրեցէ՛ք Աստծուց, եւ նա կր տայ ձեզ, փնտռեցէ՛ք եւ կր գտնէք, բախեցէ՛ք, եւ կր բացուի ձեր առաջ. որովհետեւ, ով որ ուզի, ստանում է, ով որ փնտռի, գտնում է, եւ ով որ բախի, նրա առաջ կր բացուի» (Մատթ. 7:7-8):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Այսօր Թարգմանիչ սուրբ Վարդապետների տօնն է, համազգային աղօթքի եւ խոնարհումի, յիշատակի եւ հոգեւոր կայծով նոր հոգեմտաւոր խարոյկ վառելու օր: Պաշտօնական անուանմամբ սա ոչ միայն այս հոգեւոր հսկաների յիշատակի, այլև նրանց միջոցով Աստծոյ Խօսքը՝ Սուրբ Գիրքը մեզ բերելու, Աստծուն հայերէն խօսեցնելու, մեզ համար աւելի հասկանալի եւ մերձ, հարազատ եւ սիրելի դարձնելու օր է, որ խօսուն կերպով երեւում է օրացուցային նշումից.

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԱՑՆ ՄԵՐՈՑ ՄԵՍՐՈՎԲԱՅ, ԵՂԻՇԷԻ, ՄՈՎՍԻՍ Ի ՔԵՐԹՈՂԻՆ, ԴԱԲԹԻ ԱՆՅԱՂԹ ՓԻԼԻՍՈՓԱՅԻՆ, ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅԻՈՅՆ ԵՒ ՆԵՐՍԻ ՄԻ ԿԼԱՅԵՑԻՈՅՆ: ՏՕՆ ԱՉԳԱՅԻՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ Ի ՅԻՇԱՏԱԿ ԳԻՏԻ ՆՇԱՆԱԳՐԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

Որեւէ ազգի հոգեւոր-քրիստոնէական ճանապարհը նաեւ վկայութիւնների եւ Աստծոյ հայրական խնամքի տարեգրութիւն է: Երբ ազգը հոգեւորանում է այնքան, որ կարողանում է ձուլել, ազնուացնել նիւթը, հոգին առաւել դարձնելով՝ հոգեղինացնել նաեւ մարմինը, հոգեւոր արգանդից ծնւում է ազգի յարատեւութեան ծրագիրը: Սա է պատմառը, որ Սուրբ Թարգմանչաց օրը ազգային-եկեղեցական տօն է: Առանց հոգու մարմինը մեռած է, առանց հոգեւոր եւ ազգային յիշողութեան, անյատակ է մեր ապագան: Երէք կարեւոր պատգամ ունի այս տօնը անգամ իր անուանումի մէջ.

Ա. Յիշել, ոգեկոչել իր հոգեւոր կենսագրութեան կերտողներին: Սիրել եւ գնահատել նրանց ոչ իբրեւ պատմութեան մեռած հերոսների, այլ իբրեւ հոգու եւ մտքի կենդանի ուսուցիչների:

Բ. Յիշել եւ սերունդներին փոխանցել, որ Սուրբ Մեսրոպ վարդապետի գորաւոր ճգնութեան եւ աղօթական որոնումի պատասխան եղաւ Հայոց նշանագրերի գիւտը՝ իբրեւ յայտնութիւն Աստծուց:

Գ. Սովորել Քրիստոսի լոյսը կրելու եւ փոխանցելու մեծ արուեստը, սովորելու ազգային-եկեղեցական դպրոցի այս չինացող ուսուցիչներից: Թարգմանչաց տօնը այս սուրբ այրերին նմանուելու պատգամ է՝ բոցավառուելու Աստծոյ եւ ժողովրդի սիրով, անմնացորդ զոհաբերուելու անանձնական մեծ գործի համար, լինելու կայծ նաեւ ապագայի խարոյկների:

Պատահական չէ, որ թէ՛ Հայաստանի մէջ, եւ թէ՛ Սփիւռքի հայ գաղթօջախներում այս տօնն ազգային եւ հոգեւոր ինքնութեան, սեփական տեսակի յիշողութեան ու նորոգման խորհուրդն ունի: Բոլոր այս վարդապետները աղօթող եւ հոգեւոր ծառայութեամբ, սիրոյ զոհաբերումով ժողովրդական սէր եւ խոնարհում վաստակած հայրեր են: Իւրաքանչիւր հայ քրիստոնէայ՝ իբրեւ հայախօս եւ հայաաղօթ մարդ, պատկառանք ունի այս հսկաների առաջ:

Յաճախ շատերին զարմանք է պատճառում, որ Թարգմանիչ Վարդապետների շարքում յիշում են ոչ միայն սուրբ Մեսրոպ-Սահակ զոյգի աւագ եւ կրտսեր աշակերտները, որոնք Աստուծաշունչ Մատեանի թարգմանութեան լծուեցին իրենց ուսուցիչների հետ, այլեւ սուրբ Գրիգոր Նարեկացի վարդապետն ու Ներսես Ծնորհալի սուրբ հայրապետը: Այս յիշատակումով մեզ է բացւում «թարգմանիչ» բառի բոլորովին այլ բացատրութիւնը, որն է՝ աստուածային խորհուրդները թարգմանող, մեկնող, բացատրող ուսուցիչը: Այս Սուրբ Հայրերը ոչ միայն իրենց մատենագրական վաստակով, այլեւ կերպարով եւ աղօթական կեանքով ոգեշնչող օրինակներ են ուսուցչի, առաջնորդի, հօր, աշակերտի, աղօթող հաւատացեալի. *«Բայց իւրաքանչիւրին տրուած է Հոգու յայտնութիւն՝ իւրաքանչիւրի օգուտի համար. Մէկին Հոգուց տրուած է իմաստութեան խօսք, միւսին՝ գիտութեան խօսք՝ նոյն Հոգուց, միւսին հաւատ՝ նոյն Հոգով...»* (Ա Կորնթ. 12:7-8):

Այսօր ամենուր վտանգուած է ե՛ւ հոգեւոր, ե՛ւ ազգային տեսակի պահպանումը: Այսօր Սփիւռքում նուիրեալ մշակների ջանքերով դեռ շնչում է Հայ Դպրոցը՝ հայ քրիստոնէայ տեսակի միջնաբերդը: Վտանգուած է արեւմտահայ լեզուն եւ ընդհանրապէս հայերէն խօսքն ու աղօթքը: Եւ Թարգմանչաց Սուրբ Վարդապետների տօնն առաւել ազդու կոչ է դառնում՝ խօսելու, գրելու, երգելու, աղօթելու, ապրելու ըստ Աստծոյ եւ ըստ Հայոց աւանդութեան: Յաւ ի սիրտ պէտք է նշել, որ յաճախ աթէիստական մտքի արդիւնքը դեռ տեսանելի է, երբ հոգեգրկուած կերպով են մատուցւում այս հոգեւոր եւ աղօթող մարդկանց կերպարները՝ առանց հոգեւորական կոչման, առանց ուսուցչական իրենց անձնագոհութեան սնունդ եղող աղօթքի, Սուրբ Գրքով կրթուելու եւ առաքինի կեանքի օրինակների: Մարմինը կենդանի է աստուածատուր հոգով, երկնայինն ու վեհը քննող մտքով:

Ուրեմն, Սուրբ Թարգմանչաց տօնը մեզ համար մեր հոգեւոր եւ ազգային արմատներին վերդառնալու, մեր նախնեաց ոգին կենդանի պահելու տօն պիտի լինի: Այժմ այս տօնը մեզ համար հայրենադարձութեան կանչ է, օտարների մէջ մեր ձուլման եւ անհետ կորչելու դէմ զօրաւոր պատնէշ, Հայրենի իշխանութիւնների համար ազգային-քրիստոնէական կենցաղն ու տեսակը պահպանելու յորդոր, հրահանգ եւ կոչ, բոլորիս՝ «մենք»-ի սիրոյ համար «ես»-ը զոհելու ոգեշնչող օրինակ:

Թող մեր Փրկչի լուսաւոր վարդապետութիւնը Թարգմանիչ Սուրբ Վարդապետների եւ իրենց շաւղին հաւատարիմ ուսուցիչների միջոցով շարունակուի սերմնացանուել, գիտութեամբ եւ բարոյական մաքրութեամբ ու սրբութեամբ սնուած նոր սերունդներ կրթել՝ օրինութեամբ եւ առաջնորդութեամբ Աստծոյ Սուրբ Հոգու:

«Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց Անեղին նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Մեսրոպայ, անմատոյց Լուսոյն երկրպագեցուք» (Շարակնոց, Կանոն սր.Թարգմանչաց)

«Որ փառաւոր Անեղ [Աստծոյ] ճշմարիտ լոյսի խորհրդով նկարագրուեց մեզ [համար] կենդանի Գիր[ք]ը Մեծն Մեսրոպի մաքուր արգանդում. [եկէք] երկրպագենք անմատչելի Լոյսին»

Մեր Սուրբ Հայրերի եւ Աստծուն թարգմանող լուսաւոր վարդապետների բարեխօսութեամբ Տէրը բարի աչքով նայի մեր ազգին եւ ապագայ սերունդներին, որոնց միջոցով պիտի շարունակուի փառաբանուել անունն ամենագօր մեր Աստծոյ, Ում փառք յաւիտեանս. ամէն:

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

Սրբոց Թարգմանչաց տոն

Ամեն ժողովուրդ իր ազգային եկեղեցական տոներն ունի: Հայ ժողովուրդն էլ այլ տոների շարքում ունի իր լեզվի ու մշակույթի տոնը: Ամեն տարի հոկտեմբեր ամսին Հայոց Եկեղեցին տոնում է ԹԱՐԳՄԱՆՉԱՑ տոնը:

«Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: (Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խոսքերը):

Դպրոցական տարիներից բոլորը գիտեն հայերեն տառերով գրված առաջին նախադասությունը, բայց քչերին է հայտնի, որ այդ նախադասությունը Աստվածաշունչ մատյանից է, որ հայերեն գրերը Աստծու պարզն են հայ ժողովրդին...

Հայաստան աշխարհի քրիստոնէացումից մինչև 5-րդ դար հայ եկեղեցին տակավին չէր հայացել, որովհետև չունէր սեփական գիր ու գրականություն: Քրիստոնէությունն իբրև պետական կրոն ընդունելուց մոտ մեկ դար էր անցել: Վանքերում և եկեղեցիներում կանոնավոր արարողություններ էին կատարվում, ընթերցվում էր Սուրբ Գիրքը, սակայն



ժողովրդի մեծ մասի համար անհասկանալի էր այդ ամենը, քանզի հայերեն գրերի բացակայության պայմաններում եկեղեցական լեզուն ասորերենն էր: Ուստի և, Աստծու խոսքը շատերի սրտերին չէր հասնում:

Ահա այս պայմաններում էր, որ Սուրբ Մեսրոպ վարդապետը, Մահակ Պարթև կաթողիկոսի օրհնությամբ ձեռնամուխ եղավ հայոց տառերի ստեղծմանը: Երկար փնտրումներից ու այլ ազգերի տառերը հայերեն լեզվի համապատասխանեցնելու անհաջող փորձերից հետո Մաշտոցը տրվեց աղոթքին ու խոկմանը, և Աստված լսեց նրա աղոթքները: Մաշտոցը, ոչ այն է երազով՝ քնի մեջ, ոչ այն է տեսիլքով՝ արթմնի, տեսավ, թե ինչպես մի ձեռք տառեր է գրում ու տառերը պահպանում են իրենց ձևը, ինչպես ձյան վրա: Աղոթքից վեր կենալով, Մաշտոց վարդապետը գրի առավ մեր նշագրերը: **1600 տարի** է անցել այդ օրվանից, բայց հայ գրերը չեն փոփոխվել ու պահպանել են իրենց նախնական տեսքը, քանի որ հույժ կատարյալ են, ինչպես Աստծու ստեղծած ամեն ինչ:

Ապա սկսվեց Աստվածաշունչ մատյանի ամբողջական թարգմանությունը,

որ մշակումներով ու լրացումներով տևեց շուրջ 30 տարի: Աստվածաշունչն այլևս հայերեն էր, Աստված խոսում էր հայերեն: **Ս. Մահակ Պարթևն** ու **Ս. Մեսրոպ Մաշտոցը**, **Եզնիկ Կողբացին** ու **Հովսեփ Պաղունացին**, **Կորյունը**, **Ղևոնդ Վանանդեցին** և մյուսներն իրենց հոգու ամբողջ ջերմությունը ներդրեցին, իրենց հոգին նվիրեցին Աստվածաշնչի թարգմանության սրբազան գործին: Նրանց անկրկնելի թարգմանության շնորհիվ Աստվածաշնչի հայերեն օրինակը բոլոր ազգերի կողմից անվանվեց **ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱԳՈՒՇԻ**: Շուտով բացվեցին դպրոցներ, սկիզբ դրվեց հայ դպրությանը: Գրվեցին աղոթքներ, հոգեգմայլ շարականներ, զարկ տրվեց թարգմանական և ինքնուրույն գրականությանը, մարդկային բազմություններով լցվեցին եկեղեցիները, ճոխացան Փրկչի տոները: Եվ լուսավորվեց ողջ Հայոց աշխարհը: Հայ գրերի գյուտով և Աստվածաշնչի թարգմանությամբ հիմք դրվեց հայ հոգևոր-մշակութային նոր շարժման, որ մեր ազգի **ՈՍԿԵՂԱՐԸ** դարձավ:

Թարգմանիչ բառը ներկայիս առօրյա խոսակցական իմաստով նշանակում է լոկ մի լեզվից մի այլ լեզվի թարգմանող անձ: Սակայն մեր հայրերը ոչ միայն թարգմանեցին Աստվածաշունչը, այլ ապրեցին ու այն հայացրին: Սուրբ Գիրքը հայ ժողովրդի համար կյանքի ձև ստացավ: Նրանք Աստծուն իջեցրին հայ մարդու հոգու մեջ:

Քրիստոնեությունը միս ու արյուն դարձավ հայի համար, դարձավ գորություն և հային հայ պահեց բոլոր ժամանակներում:

Սուրբ թարգմանիչները իրենց կյանքով դարձան հայ ժողովրդի թարգմանը Աստծու մոտ: Այսօր էլ նրանք շարունակում են իբրև փարոս լուսավորել հայոց ապագան: Թարգմանչաց տոնը հայ հոգու պանծացման տոնն է: Մեր եկեղեցու հայրերն այսօր էլ կարծես խոսում են մեզ հետ: Ս. Մահակը սովորեցնում է մեզ մեծ լինել և խոնարհ, Ս. Մաշտոցը՝ չվախենալ և աղոթքով հաղթահարել դժվարությունները, Եզնիկը ուղեցույց է հավատքը պաշտպանելու,

Եղիշեն հայրենասիրությամբ է լցնում մեզ, Խորենացին ուսուցանում է հայոց պատմությունը, Շիրակացին առաջնորդում է բնության և տիեզերքի գաղտնիքների մեջ, Գրիգոր Նարեկացին մեր հոգին բարձրացնում է դեպի Աստված, Շնորհալին հայ հավատքի բանաձևն է տալիս և սովորեցնում Աստծու փառքը երգել ... «Թարգմանիչներ» անվանված հոգևոր մշակութային հզոր շարժումն անկրկնելի երևույթ էր հայոց պատմության մեջ: Թարգմանիչները հիմք դրեցին ազգային ինքնություն գրականության, ճարտարապետության, պատմագրության, բժշկության, փիլիսոփայության, աստվածաբանության, երաժշտության, որով մենք քաղաքակիրթ աշխարհի լիիրավ անդամը դարձանք: Այդ նրանք էին, որ գրեթե ոչնչից ստեղծեցին ինքնատիպ մի մշակույթ, որ ուրիշ ոչ մեկ ազգի հետ չես շփոթի: Այդ նրանց ջանքերով էր, որ ազգը համախմբվեց միասնական մեկ հավատքի շուրջ և կարողացավ ետ վանել ճակատագրի դառը փորձությունները:

Հազար ու մի փոթորիկներ անցան հայ ժողովրդի վրայով, բայց ոչ մի արհավիրք չկարողացավ հայ ժողովրդի հոգուց իլել իր սեփական մայրենի լեզուն և իր արյունով գնված քրիստոնեական հավատքը, որ մեր պապերը կտակեցին մեզ: Նրանք կտակեցին չբաժանվել մեր Մայր եկեղեցուց, որ ծննդավայրն է հայ լեզվի և հայ մշակույթի:

Այսօր մեզ մնում է աղոթել Աստծուն և մաղթել, որ Թարգմանչաց ոգին և նրանց շնորհները մնան հայ ազգի յուրաքանչյուր անհատի հետ:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to thank students of both K.Tahta Armenian Community School and Armenian Language Saturday School and the scouts of HMEM who are here today celebrating Holy Translators day.

We extend out gratitude to all the Parents and Grandparents who have accompanied their children and grandchildren and continue our long established tradition to bless the children before the start of each academic year. *THANK YOU.*

Please come and join us after Divine Liturg at Navasartian Centre for a festive Lunch for the occasion. Our flyer below



St Yeghiche Armenian Church Parish Ladies Guild, Invites you to

Holy Translators Day

**Festive Lunch under the auspices of
HG Bishop Hovakim Manukyan**

Since ancient times, the Armenian church has beatified the "translators". To this day, the Armenian nation and the church celebrate this special feast; designated as "Tarkmanchatz Don"--Translators Day-- in the month of October.

Considering their contribution, it is not difficult to understand why.

Music, Dancing, Authentic Armenian Food and Desserts from various regions of Armenia.

JOIN US ON SUNDAY 13TH OCTOBER 2019 STARTING AT 2:30PM FOR AN AUTHENTIC FAMILY DAY CELEBRATION

at

**Navasartian Centre
223 Northfield Ave
London W13 9QU**

Nearest tube station Northfields on Piccadilly line

For booking please call:

Aline : 07938 947 204

Seta: 07973 482 969

Aida: 07503 989 897

Hroosh: 07752 791870

Admission per person

Adults: £20.00

Children under 12: £10.00

Children under 6: free

3: Հոգեհանգիստ - Memorial Service

Rest of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Lousin Varoujian, Mr Berj Moutafian, Mr & Mrs Haig Moutafian and Family and Mr & Mrs Sevan Moutafian and Family for the soul of their Daughter, Wife, Mother and Grandmother the late **ANI MOUTAFIAN (ԱՆԻ ՄՈՒԿԱՖԵԱՆ)**, on the 4th anniversary memorial of her passing, and for all the old and new deceased members of the **VAROUJIAN** and **MOUTAFIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ խորհրդակատարութիւններուն՝ Տնօրինէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանին** 07548 777 147:

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully accepted.*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

St Yeghiche Parish Council appeals to all members for **prompt** payment of their **annual membership dues and generous donations**, thus saving your parish administrative and postage costs.

Please hand in your membership dues and donations to the members of the Parish Council at the side entrance desk of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques pay-able to: **“St Yeghiche Armenian Church”**. You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.